

Արմենուհի Ավետիսյան
ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետ, մագ. 1-ին կուրս
Գիտ. ղեկ.՝ Բ. Գ. Ք., դոց. Ն. Դիլբարյան
Էլ. փոստ՝ armavetissyan@gmail.com

ՅՅՈՒՄԵՅԻ ԵՎ ԹԵՍԵՅԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ողջ մարդկությանը բոլոր ժամանակներում հետաքրքրել է իրի կամ երևույթի, դրանց հասկացության և անվան փոխհարաբերության հարցը, որը, ըստ էության, կապված է լեզվի ծագման ու զարգացման խնդրի հետ, իսկ վերջինս էլ՝ մարդկային ինքնաճանաչողության հետ: Այս հարցին լեզվաբանության պատմության մեջ տրվել է երկու պատասխան՝ կամ բառերը համապատասխանում են իրերին և երևույթներին, որը հունական լեզվափիլիսոփայության մեջ կոչվել է ֆյուսեյի (ըստ բնության) տեսություն, կամ բառերը չեն համապատասխանում անվանվող իրին կամ երևույթին, որն էլ կոչվել է թեսեյի (ըստ դրվածքի) տեսություն:

Հայ լեզվաբանության մեջ գրեթե անդրադարձ չի եղել այս հարցին, մինչև հայերենը, լինելով հնագույն լեզուներից մեկը, շատ հետաքրքիր իրողություններ է բացահայտում ողջ մարդկության լեզվի ծագման և զարգացման առումով:

Մենք կատարել ենք մի փորձնական քննություն հայերենում՝ ֆյուսեյի և թեսեյի տեսությունների վերաբերյալ և ակնկալում ենք, որ այն լայնածավալ ուսումնասիրությունների մեկնարկ կդառնա:

Մարդկային լեզուն հասարակական-պատմական կյանքի վերաբերյալ ամենակարևոր աղբյուրներից մեկն է: Աշխարհը և ինքն իրեն ճանաչելու անհագ ցանկություն ունեցող մարդկությունը՝ շատ վաղուց է սկսել լեզվական հարցերի քննությունը: Դեռևս Քրիստոսի ծննդից շատ առաջ տեքստերի ուսումնասիրման և ուսուցման համար կազմել են բառերի և վանկերի ցանկեր՝ քերականական դիտողություններով, իսկ չինացիներն արդեն մշակված բառարաններ են կազմել:

Գ. Ջահուկյանը գրում է, որ առանձին լեզուների բազմակողմանի և խոր ուսումնասիրության համար կարևոր դեր խաղաց հատկապես երկու հանգամանք՝ փիլիսոփայական-տրամաբանական հետազոտությունների հետ կապված լեզվական հարցերի արծարծումը և անմիջական բանասիրական-տեքստաբանական աշխատանքներից բխող անհրաժեշտությունը¹: Հետաքրքիր է, որ այս ուղղությունները տարբեր երկրներում տարբեր կերպ են դրսևորվել. հնդկական քերականությունը լեզվական հարցերում չկատարեց փիլիսոփայական-տրամաբանական լայն հարցադրումներ, իսկ հունական քերականության առաջացման հիմքը հենց փիլիսոփայական-տրամաբանական հետազոտություններն էին, որոնք նպաստեցին լեզվաբանության՝ որպես առանձին գիտության ձևավորմանը: Երկու ուղղությունների հետևորդներն էլ անդրադարձել են անվան և իրի փոխհարաբերության հարցին: Հին հնդկական գրեթե բոլոր փիլիսոփաներն անվանելու հատկությունն ըմբռնում էին որպես մարդկային էության անբաժանելի մաս: Հնդկական էմպիրիկ-նկարագրական քերականության մեջ այս խնդրի վերաբերյալ երկու տեսակետ կար. առաջինի հետևորդները կարծում էին, որ հասկացությունն ու բառը նույնական չեն, բայց նաև առանց իրար գոյություն չունեն: Նրանք բացատրում են, որ չտարբերակված «ներքին» բառը տրամաբանորեն նախորդում է անհատական հասկացությանը, որն արտահայտվում է նոր՝ ինտուիտիվ մտահղացմամբ՝ տալով դրան համապատասխան

¹ Ջահուկյան Գ., Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան 1954, էջ 9:

ծն¹: Ըստ երկրորդ տեսակետի՝ բառը ոչ միայն հասկացության ձևն է կամ կառուցվածքը, այլ հենց հասկացությունն է: Հին Հնդկաստանի քերական Բխարտրիխարին վերջին տեսակետի հետևորդն է և ասում է. «Եթե հասկացությունը դուրս գար իր արտահայտության ձևից «լուսավորություն» չէր լինի, այն իրերի տարբերակման պատճառն է»: ² Ջայնիզմի և նիայայի հետևորդներն էլ պաշտպանում են առարկաների և նրանց անունների պայմանական համաձայնության սկզբունքը, իսկ վայակարանայի և միմանսայի ներկայացուցիչները՝ անվան և առարկայի բնական կապի գաղափարը:

Այս հարցը քննարկման առարկա է դառնում նաև վաղ չինական լեզվափիլիսոփայության մեջ: Կոնֆուցիոսը և նրա հետևորդները սովորեցնում էին, որ անունը անխզելիորեն կապված է նշանակվողին և պետք է համաձայնի դրան, սակայն հետաքրքիրն այն է, որ նրանք չեն ասում, թե ի սկզբանե անունը և իրը համապատասխանել են, նրանք պարզապես կարծում էին, որ այդպես պետք է լինի, որպեսզի հասարակության մեջ տիրի կարգուկանոն: Երբ Կոնֆուցիոսին հարցրել են, թե որը կլինի նրա առաջին գործը, երբ դառնա պետության ղեկավար, նա պատասխանել է, որ ամենակարևորը «անունների ուղղումն» է, սա նշանակում էր, որ կատարյալ կարող էր համարվել միայն այն անունը, որը ներդաշնակ է իրի էությանը: Սակայն կոնֆուցիականների գաղափարը լեզվականից առավել հասարակական բնույթ ուներ, քանի որ նրանք կարծում էին, որ որոշակի դիրք զբաղեցնող մարդը պետք է դրսևորի իրեն այդ դիրքին համապատասխան, այսինքն անունը ևս պետք է համապատասխան լինի կրողին: Այս պահանջի խախտման հետևանքն էին համարում հասարակության մեջ եղած անկարգությունը: Լեգիստականները ևս համաձայն էին այս գաղափարին, սակայն դառնականները պնդում էին, որ բառանվան և առարկայի կապը պայմանական է: Նրանք ասում են «Ճանապարհը ճանապարհ է դառնում միայն այն ժամանակ, երբ նրա վրայով քայլում են, իսկ իրերն էլ իրեր են դառնում, երբ նրանց անվանում են»³, օրինակ չկան լավ կամ վատ արարքներ, կան պարզապես արարքներ, որոնց անվանում ենք լավ կամ վատ: Եթե նրանց լսենք, ուրեմն կարող ենք վատ արարքն անվանել լավ՝ առանց հաշվի առնելու «վատ» բառից ստացած բացասական զգացողությունը, սակայն ակնհայտ է որ «վատ» բառն անմիջականորեն կապված է բացասական արարքի հետ և այդ արարքից ստացած զգացողության անմիջական կրողն է:

Նշված գաղափարների մեջ միջանկյալ դիրք է գրավում Սյուն Կուանի տեսակետը, ըստ որի անունները համաձայնությամբ են դրվում և ամրապնդվում են սովորությամբ: Իրականության և անվան միջև համաձայնություն չկա, և անվանումը ենթադրում է պայմանավորվածություն: Նա ասում է որ ի սկզբանե որևէ կապ չկա անվան և իրականության միջև, առարկաներն անվանվում են մարդկանց համաձայնության շնորհիվ:

Այս թեման լայն քննարկումների առիթ դարձավ հին աշխարհի քաղաքակրթության ակունքներից մեկում՝ Հին Հունաստանում, որտեղ փիլիսոփա տրամաբանները փորձում էին պարզաբանել արտաքին և ներքին մտածական աշխարհների հարաբերությունները և բնականաբար հանգում էին մարդկային լեզվի հետ կապված հարցերին: Փաստորեն, լեզվաբանությունը ևս ձևավորվեց փիլիսոփայության տիրույթում: Նարինե Դիլբարյանը գրում է. «Այս հասկացություններն ուղղակիորեն ենթարկված էին փիլիսոփայությանը, որովհետև անտիկ մտածողների համար լեզուն փիլիսոփայական, գոյաբանական հարցերի լուծմանն օժանդակող միջոց էր»⁴:

Հունական միջավայրում ևս այս հարցը հիմնականում երկու լուծում է ստանում: «Պարզաբանումներ Արիստոտելի «Մեկնաբանության մասին» աշխատության հեղի-

¹ История лингвистических учений, Древний мир, Ленинград, 1990, с. 87:

² Նույն տեղում, էջ 88:

³ Նույն տեղում, էջ 94:

⁴ Դիլբարյան Ն., Անվան ըմբռնումը հայ լեզվաբանության մեջ, Երևան, 2000, էջ 16:

նակ Անոնիոսը այս երկու տեսակետները խմբավորում է և փորձում շփման եզրեր գտնել նրանց միջև, որոնցից յուրաքանչյուրում նա տեսնում է երկու խմբավորում՝ ֆյուսեյի և թեսեյի: Փաստորեն՝ փիլիսոփաների մի մասը կարծում է, որ շրջապատող իրականության առարկաներն իրենց անունները ստանում են իրենց բնույթին համապատասխան, և այս տեսակետը անվանվում է *ֆյուսեյի* (ըստ բնության) տեսություն, որի հետևորդներն էին՝ Պյութագորասը, ով ասում էր, որ անունները արդեն գոյություն ունեն իրերի մեջ, իսկ մարդը պարզապես բացահայտում է դրանք, Չերակլիտեսը, Պարմենիդեսը, Կրատիլոսը և այլք: Մյուս տեսակետը պաշտպանողները կարծում էին, որ անունները մարդկային պայմանավորվածության արդյունք էին, և այս տեսությունն անվանվում է *թեսեյի* (ըստ դրության) տեսություն, և դրա ամենամեծ գաղափարախոսները Արիստոտելն ու Պլատոնն էին: Արիստոտելը նույնիսկ բաղադրյալ բառերի համար էր ժխտում անվան և իրի կապը: Պլատոնն այս վեճերին է նվիրել մի երկխոսություն «Կրատիլոս» անունով, որի գործող անձինք են Կրատիլոսը, Չերմոգենեսը և Սոկրատեսը: Կրատիլոսը պաշտպանում է ֆյուսեյի տեսությունը և ամեն մի տառին որոշակի իմաստ է վերագրում: Չերմոգենեսը պաշտպանում է թեսեյի տեսությունը և հակադրվում է Կրատիլոսին: Սոկրատեսը համաձայնում է և՛ Կրատիլոսի, և՛ Չերմոգենեսի ասածներին, սակայն նրանց ստիպում է այնքան շարունակել իրենց դատողությունները, մինչև որ հասնեն մի պնդման, որին հենց իրենք համաձայն չեն: Պլատոնը Սոկրատեսի միջոցով արտահայտում է այն կարծիքը, որ առաջին բառերը համապատասխանել են իրերին, սակայն հետագայում դրանք որոշակի փոփոխությունների են ենթարկվել, փոխվել են ինչպես հնչյունները, այնպես էլ իմաստները: Այստեղ երկար քննարկումներից հետո հանգում են նրան, որ անունները առարկաների ճշգրիտ արտացոլումները չեն, իսկ այն, որ մարդիկ միատեսակ են հասկանում բառերը, բխում է սովորույթից:

Այս խնդիրը ստիկները դարձնում են եռակողմ՝ առարկայի և անվան միջև մտնում է հասկացությունը: Ըստ նրանց՝ առարկաներն ու երևույթները անվանվում են մարդու զգայարանների վրա թողած հոգեբանական զգացողությանը համապատասխան: Այսինքն՝ անվանադրման գործընթացին մասնակցում են առարկան կամ երևույթը, դրանից ստացված զգացողությունը և անունը: Նրանք, ըստ էության, լեզվի առաջացման բնածայնական տեսության կողմնակիցներ էին և օրինակ էին բերում բնածայնական բառեր, ինչպես՝ մայուն: Այս մոտեցումը հետագայում զարգացնում են հռոմեացիները: Այս տեսակետների միավորողներն էին էպիկուրյանները: Ըստ նրանց՝ անունները ծագման նախնական շրջանում համապատասխանում էին մարդկային բնությանը, բայց հետագայում մարդիկ սահմանեցին նշաններ, որ փոխհարողակցումն ավելի հեշտ լինի:

Չելլենիզմի դարաշրջանում այս բանավեճը դառնում է համաբանությունների ու անկանոնությունների տեսական հակադրություն: Սրանց փոխհարաբերության խնդիրը ըստ էության հանգում է լեզվի մեջ բառի քերականական ձևի և իմաստի, այսինքն՝ քերականական ու տրամաբանական կարգերի համապատասխանության կամ անհամապատասխանության գաղափարին: Այս դպրոցի հետևորդներ Գիոնիսիոս Թրակացին մ.թ.ա. 170-99, ով իր աշխատության մեջ բուն քերականությունը համարում է անալոգիկ ձևերի հաստատում: Փաստորեն այս հարցերն էին ընկած քերականական համակարգի ստեղծման հիմքում:

Անվան և իրի փոխհարաբերության հարցը հետաքրքիր է ոչ միայն համամարդկային լեզվի ուսումնասիրության տեսակետից, այլև ազգային լեզվի տեսակետից, քանի որ ազգային լեզուն իր մեջ ներառում է տվյալ ժողովրդի հոգեբանությունը, մտածողությունն ու ազգային նկարագիրը: Հայերենում այս հարցի արտացոլումը պարզելու համար ուսումնասիրեցինք երկու նշանավոր բառարաններից՝ Նոր հայկազյան բառարանից և Ստեփան Մալխասյանցի բառարանից հարյուրական էջ:

Արդյունքը շատ հետաքրքիր էր. մեր ուսումնասիրած, հիմնականում պարզ, բառերի մեծ մասը ֆյուսեյի տեսության ապացույցներ էին, օրինակ՝

- Նոր հայկազյան բառարան՝
- ազդու
- ագռավ
- ախցիփեխց թափփված
- ակաղծուն (լի, լեցուն)
- ակառն (բերդ, ամրոց)
- աղբ
- աղճատանք (շառաչանք, ցնորք)
- ամբաստան
- ամփոփ
- այր
- ամբոխ...
- Ստեփան Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան՝
- ագռ (մեղրի կամ շիրայի միրուր, տկուցք)
- ալազանդ (գործունեության մեջ շտապ)
- ակռա
- ահռելի
- ահեղ
- աղճատել
- աղցք (կարիք, պետք)
- աղծապիղծ
- ածու...

Պետք է նշել, որ ֆյուսեյի տեսությունը ապացուցող բառերը Նոր հայկազյան բառարանում ավելի քիչ էին, քան Մալխասյանցի բառարանում, որի պատճառն այն է, որ այստեղ բարբառային բառերը շատ են, որն էլ իր հերթին ապացուցում է, որ ժողովուրդը երբ նոր բառեր է ստեղծում, դրանք անպայման ենթագիտակցորեն համապատասխանեցնում է իրին կամ երևույթին: Այստեղ գործում է հասկանալով կիրառելու օրենքը. օրինակ՝

- ալակոշկոճ (չղջիկ)
- ալակուշկուշ (միհար, վտիտ)
- ալաչակչակ (փայտփորիկ)
- ալապստրակ (նապաստակ)
- ալապուճուկ (երևակայական կենդանի, որով վախեցնում էին երեխաներին)
- ալեվալե (անշնորք, թափփված)
- ահմռել (զարհուրել)...

Իրերն ու երևույթներն իրենց անուններով կոչելը դրսևորվում է նաև նոր բառեր կազմելու ժամանակ, երբ գրեթե միշտ միտում կա այնպիսի բառ կազմելու, որ արտահայտի իրի կամ երևույթի էությունը, օրինակ՝ համացանց, համակարգիչ, հեռուստացույց, կրիչ, հաղորդիչ և նման այլ բառեր: Նոր ստեղծված բառն այն ժամանակ է գործածության մեջ մտնում, երբ ընդունվում և կիրառվում է ժողովրդի կողմից, իսկ փաստը ցույց է տալիս, որ գործածության մեջ մտած բառերի մեծ մասը թեսեյի տեսության ապացույցներ են:

Այս տեսության գերակշռումը հայերենում պարզ երևում է նաև հատուկ անունների դեպքում: Անձնանունները աներկբայորեն բնորոշում են մարդուն, ժողովուրդն էլ հոգեբանորեն միավոր է անունից ճանաչելու մարդուն, իսկ եթե այդպես չի ստացվում, և անձնանունները լուկ նշանային բնույթ են կրում, օգնության է գալիս մականունը, օրինակ՝ Նաղաշ Հովնաթան, Դավթակ Քերթոզ, Դավիթ Անհաղթ և այլն: Այս երևույթը գործել է նաև իմ նշանաստանում. «Իլիականում» և «Ոդիսականում» հերոսներն ունեն նաև երկրորդ՝ բնութագրական անուն, օրինակ՝ Անթև Հերմես,

¹ Նույն տեղում, էջ 16:

որտեղ առաջին միավորը ֆյուսեյ է, երկրորդը՝ թեսեյ:

Ինչպես տեսանք բնության ներդաշնակության օրենքը՝ ձևի և բովանդակության համապատասխանություն գործում է բոլոր բնագավառներում. թե՛ լեզվի, թե՛ բառերի փոխկապակցվածության, թե՛ քերականության ժազման և այլ ոլորտներում: Չևի և բովանդակության, ներքինի և արտաքինի հարցն անմիջականորեն կապված է անվան և իրի փոխհարաբերության հետ, որտեղ ևս դիտարկվում է այդ ներդաշնակությունը:

Այս հարցերի հետազոտումը շատ կարևոր է հայերենի՝ որպես աշխարհի հնագույն լեզուներից մեկի համար, քանի որ ազգային մտածողության և հոգեբանության կարևոր երևույթներ է բացահայտում:

Ճիշտ է՝ շատ բառեր պատմության ընթացքում կորցրել են ներդաշնակությունը՝ անվան, հասկացության և իրի միջև, բայց նոր բառերը գալիս են ապացուցելու, որ այդ կապը եղել է, քանի որ ժողովուրդը միշտ ընկալում է այլն, ինչը զգում ու հասկանում է: Նա ունի մեկ հիմնական խնդիր. իրերը և երևույթները ճանաչելու միջոցով հասնել և՛ ինքնաճանաչողության, և՛ ազգային, և՛ համամարդկային ճանաչողության:

Арменуи Аветисян

ТЕОРИЯ ФЮСЕЯ И ТЕССЕЯ В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Все человечество во все времена было интересно в предмете или самой явлении понимания и в вопросе взаимоотношения названий, что фактически связано созданием языка и вопросом развивания, а данное связано самопознанием человечества. Этому вопросу было дано два ответа: или слова подходили предметам и явлениям, которое в греческой лексикофилософии называлось теорией Фюсея, или слова не подходили предметам или явлениям, что называлось теорией Тессея.

Армянский язык выясняет много интересных явлений к этому вопросу, которые представлены в данном изучении.

Armenuhi Avetisyan

FEUSSE AND TESSE'S THEORIES IN ARMENIAN LANGUAGE

In all times the humanity has been interested in the issue of correlation between a thing or a phenomenon, their concept and their name which is in fact connected with the matter the origin and the development of language. The latter in its turn refers to human self-awareness. This question has been answered in two ways. First, according to theory of nature (which was called Feusse's theory in Greek Linguophilosophy) words correspond to things and phenomena. The other was called Tesse's theory according to which words do not correspond to things and phenomena.

The Armenian language discloses very interesting facts about this issue which are presented in the following article.